ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑԻ ՀԵՏ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն հայտարարությունը հաստատված է գնահատող հանձնաժողովի

2013 թվականի փետրվարի 17-ի թիվ 6 նիստի որոշմամբ և հրապարակվում է

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն

Պատվիրատուն՝ "Միջազգային Էներգետիկ Կորպորացիա" ՓԲԸ, որը գտնվում է ք. Երևան, Ադոնցի 10Բ հասցեում, ստորև հայտարարում է պայմանագիր կնքելու որոշման վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը, ամփոփելով բաց ընթացակարգի հայտարարված մրցույթի արդյունքները:

Գնման առարկա է հանդիսանում՝ "ՄԷԿ ՓԲԸ գույքի (այդ թվում անավարտ շինարարության օբյեկտների) ապահովագրություն բոլոր ռիսկերից և ընդհանուր քաղաքացիական պատասխանատվության ապահովագրում ":

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հրավերի պահանջներին համապատասխանող հայտ /համապատասխանելու դեպքում նշել "X"/	Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր /չհամապատասխանելու դեպքում նշել "X"/	Մասնակցի առաջարկած գին /առանց ԱԱՀ, դրամ/
1	«ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ » ՓԲԸ:	X		53 010 366,00

Գնահատող հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 17-ի թիվ 6 որոշմամբ հաստատվել է բաց ընթացակարգի միակ մասնակցի կողմից ներկայացված հայտի համապատասխանատվությունը հրավերի պահանջներին և հիմք ընդունելով "ՄԷԿ" ՓԲԸ կարիքների համար կանոնակարգված գնումներ անցկացնելու Կարգի 7.8.1.6 կետը, որոշվել է գնումներ կատարել միակ աղբյուրից՝ «ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ (ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային Պողոտա 1): "ՄԷԿ" ՓԲԸ գույքի (այդ թվում անավարտ շինարարության օբյեկտների) բոլոր ռիսկերից ապահովագրության գինը կազմում է 51 452 055 (հիսունմեկ միլիոն չորս հարյուր հիսուներկու հազար հիսունհինգ) ՀՀ դրամ ԱԱՀ-0:

Քաղաքացիական պատասխանատվության ապահովագրումը կազմում է 1 558 311 (մեկ միլիոն հինգ հարյուր հիսունութ հազար երեք հարյուր տասնմեկ) ՀՀ դրամ, ԱԱՀ-0: Ապահովագրության ընդհանուր գինը կազմում է 53 010 366 (հիսուներեք միլիոն տաս հազար երեք հարյուր վաթսուն վեց) ՀՀ դրամ ԱԱՀ -0:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող, Մրցութային գնումների դեպարտամնետի պետ՝ Ա.Բ.Բարսեղյանին:

Հեռախոս՝ 010-24-50-99

Էլ.փոստ՝ office@mek.am:

Պատվիրատու՝ "Միջազգային Էներգետիկ Կորպորացիա" ՓԲԸ: